***ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

*Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.145 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի* ***2 դաստիարակի (1,17 դրույք և կրտսեր առաջին խումբ՝ 1,17 դրույք)*** *թափուր տեղերի համար:*

*Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:*

*Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝*

*-դիմում (Ձև1),մեկ լուսանկար 3x4 չափի,*

*-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*-անձը հաստատող փաստաթուղթ,*

*-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձև4),*

*-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,*

*-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*

*-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*-որակավորման կարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:*

*Փաստաթղթերն ընդունվում են* ***2026թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 17-ը ներառյալ****, ամեն օր՝* ***ժամը 10:00-17:00****, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:*

*Մրցույթը տեղի կունենա* ***2026թ. հուլիսի 21 –ին՝ ժամը 14:30-ին,*** *«Երևանի հ.145 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Շիրակի 5-րդ նրբանցք, 27/4:*

*Տեղեկությունների համար զանգահարել 010-46-75-27 հեռախոսահամարով :*